Հաստատված է ռեկտորատի

N 41/18 նիստում

26.11.2018թ.

ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ամբիոնի վարիչների և դասախոսական կազմի ընտրության և վերընտրության նպատակով կազմակերպվող որակական գնահատման ընթացակարգ

1. Ընդհանուր դրույթներ

1) Սույն ընթացակարգով սահմանվում է <<Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամի (այսուհետ համալսարան) ամբիոնների վարիչների և դասախոսական կազմի ընտրության և վերընտրության նպատակով դիմորդների որակավորման գնահատման գործընթացը:
2) Համալսարանի ամբիոնների վարիչների և դասախոսական կազմի ընտրությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, համալսարանի կանոնադրությանը և ԵՊԲՀ ամբիոնների և դասախոսական կազմի մասին կանոնակարգի համաձայն:

2. <<Դասախոսի որակավորման գնահատման հարցաթերթ>>-ի լրացումն ու ներկայացումը

1) Թափուր տեղի համար հայտարարված մրցույթին մասնակցելու ժամանակ յուրաքանչյուր դիմորդ (այսուհետ դիմորդ) ԵՊԲՀ ամբիոնների և դասախոսական կազմի մասին կանոնակարգում սահմանված այլ փաստաթղթերի հետ միասին ներկայացնում է նաև լրացված <<դասախոսի որակավորման գնահատման հարցաթերթ>>-ը (այսուհետ հարցաթերթ) դրա լրացման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի հետ մեկտեղ (հավելված 1):
2) Դիմորդը սահմանված ժամկետներում լրացնում է Հարցաթերթը և դրա համար հիմք հանդիսացող փաստաթղթերի հետ ներկայացնում է համապատասխան ֆակուլտետային գիտական խորհրդի քարտուղարություն:

3) Հարցաթերթում լրացվում են գործունեության վերջին հինգ տարիներին վերաբերվող փաստեր:
4) Դիմորդը հարցաթերթը լրացնելու ընթացքում օժանդակության համար կարող է դիմել ֆակուլտետային գիտական խորհրդի քարտուղարություն:
5) Ֆակուլտետային գիտական խորհրդի քարտուղարը ստուգում է հարցաթերթում նշված տվյալների հավաստիությունը և համապատասխանությունը որպես հիմք ներկայացված փաստաթղթերին: Հարցաթերթում նշված տվյալների հավաստիության համար պատասխանատու անձը դիմորդն է:
6) Ֆակուլտետային գիտական խորհրդի քարտուղարը կատարում է տվյալների բալային արժեքների մուտքագրումը, հաշվարկն ու ընդհանրացումը:
7) Հարցաթերթում առկա գործունեության տարբեր ձևերի գնահատման համար նախատեսված բալային արժեքները կարող են ենթարկվել փոփոխության, եթե դրա համար առկա են վիճակագրական կամ այլ հետազոտությունների արդյունքում ձևավորված հիմքեր և եթե վերը նշվածը չի հակասում տվյալ ընտրությունների ընթացքում համահավասարության սկզբունքին:

3. <<Դասախոսի որակավորման գնահատման հարցաթերթ>>-ի կիրառումը

1) Գիտական խորհրդի քարտուղարությունը դիմորդի հարցաթերթը հիմք հանդիսացող փաստաթղթերի հետ ներկայացնում է համալսարանի որակավորման հանձնաժողով երաշխավորման համար: Որակավորման հանձնաժողովի նիստին դիմորդի ներկայությունը պարտադիր է:
2) Համալսարանի որակավորման հանձնաժողովն ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերը, հարցաթերթը:
3) Համալսարանի որակավորման հանձնաժողովը որոշում կայացնելու համար հաշվի է առնում նաև դիմորդի գիտական անձնագրում նշված գիտաչափական տվյալները (մշակվում է լրացուցիչ՝ ի հավելումն տվյալ կարգի):
4) Որակավորման հանձնաժողովը դիմորդի հավաքած բալերը համեմատում է դասախոսական կազմի տարբեր տարակարգերի համար մշակված անցողիկ շեմքային արժեքների հետ և ներկայացնում որակավորման հանձնաժողով:
5) Համալսարանի որակավորման հանձնաժողովը տվյալ դասախոսի երաշխավորման վերաբերյալ որոշում է կայացնում բաց քվեարկության միջոցով, եթե փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու մասին որոշում չի կայացվել նիստին մասնակիցների առնվազն 2/3-ի մասնակցությամբ, հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ:

4. Եզրափակիչ դրույթներ

1) Ամբիոնի վարիչի կամ դասախոսական կազմի ընտրության և վերընտրության մասին վերջնական որոշում կայացնում է համապատասխան գիտական խորհուրդը:
2) Համալսարանի որակավորման խորհուրդը հանդիսանում է խորհրդատվական մարմին:
3) Գիտական խորհուրդը որոշում կայացնելիս կարող է հաշվի առնել նաև որակավորման հանձնաժողովի կայացրած որոշումը: